ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԻ ԱՐԻՈՒԹԻՆԸ



ԳԵՈՐԳ ԳԵՈՐԳԻ ՂԱԶԱՐԵԱՆ
(1975-1994)

Ծնուել է 1975 թուականի Մայիսի 20ին, Երեւանում: Սովորել է Լեոյի անուան թիւ 65 միջնակարգ դպրոցում: Սիրում էր սպորտը (բոնցքամարտիկ էր), աշխատանքը, հոգատար էր ծնողների եւ հարազատների նկատմամբ: Ապագայի հանդէպ վառ երազներով ապրող, հայեցի դաստիարակութիւն ստացած պատանի էր Գեորգ Ղազարեանը:

Կենսագրական այս կարճ փաստերը ոչինչ չեն ասում հայրենասէր եւ հերոս զինուորի մասին: Նա ապրել է ինչպէս շատ-շատերը, բայց կայ մի բան, որ անխուսափելի է բոլորի համար՝ մահը: Քչերին է տրուած գտնել ճիշտ ապրելու բանաձեւը եւ երիտասարդ տարիքում հերոսանալը:

Անչափահաս պատանուն կամաւորական ջոկատի հրամանատարները մերժում էին: Սակայն յամառ էր Գեորգ Ղազարեանը եւ 1993 թ. Յունիսին դիմումով նորից ներկայացաւ Շենգաւիթի շրջանի զինկոմիսարիատ եւ Յունիսի 7ին զօրակոչուեց ծառայութեան Հ.Հ. Զ.Ու.ում: Ծառայութեան սկզբում Գեորգը դժգոհ էր, գունդը տեղակայուած էր Երեւանում եւ չէր մասնակցում սահմանների պաշտպանութեանը: Սակայն շուտով իրականացաւ 18ամեայ պատանու երազանքը: Գումարտակը առաջադրանք ստացաւ մասնակցել հանրապետութեան հարաւ-արեւելեան սահմանների պաշտպանութեան մարտերին:

Ծանր եւ երկարատեւ մարտերից յետոյ գումարտակը կարողացաւ հակառակորդին արժանի դաս տալ: Այստեղ էր, որ Գեորգն աչքի ընկաւ իր խիզախութեամբ: Մարտական ընկերները յամառութեան եւ դիմացկունութեան համար նրան «Կոշտ» մականունն էին կնքել: 1993 թուականի Դեկտեմբերին Ադրբեջանը լայնածաւալ յարձակում սկսեց: Հայրենիքի առջեւ ծառացել էր լինել-չլինելու խնդիրը: Զօրամասի հրամանատարի խնդրելով՝ Գեորգը պահակային վաշտից փոխադրւում է մոտոր-հրաձգային գումարտակ, որպէս գնդացրորդ: Մարտադաշտ մեկնելուց առաջ ընդամենը մէկ ժամ կարողացաւ լինել տանը, ասես կանխազգում էր, որ այլեւս հայրական յարկի տակ չի լինելու...

1994 թուականի Յունուարի 19ին հանրապետութեան հիւսիս-արեւելեան սահմանագծի մարտերի ժամանակ, հարկադրուած նահանջը առանց խուճապի կազմակերպելու համար, վաշտի հրամանատար աւագ լէյտենանտ Վլադիմիր Վերդեանը միայնակ նետւում է մարտի՝ զինուորներին հնարաւորութիւն տալով նահանջել եւ նոր ռազմավարական կարեւոր պաշտպանական դիրքեր գրաւել: Հակառակորդի նշանառուի կողմից Վերդեանը վիրաւորւում է: Գեորգը, տեսնելով վիրաւոր հրամանատարին, շտապում է վերջինիս դուրս բերել կրակագծից:

Հակառակորդի նշանառուի կրակից Գեորգը վիրաւորւում է մէջքից՝ կորցնելով շարժուելու ունակութիւնը: Ադրբեջանցիները, նկատելով վիրաւոր սպային եւ շարքային, ցանկանում են օղակել եւ գերել նրանց: Խուսափելով գերուելուց՝ երկու վիրաւորները գրկում են իրար եւ այն պահին, երբ հակառակորդի զինուորները մօտենում են, պայթեցնում են իրենց ձեռքի նռնակը:

Քանի-քանի անգամ է հայ զինուորը իր քաջութեամբ զարմացրել անգամ հակառակորդին: Քանի-քանի անգամ է հայ զինուորի արիութիւնից հերոսացման դասեր առել հենց հակառակորդը:

Անցել են տարիներ, այսօր Եռաբլուր պանթէոնում միասին են սպան եւ շարքայինը: Հերոսները չեն մեղնում, հերոսներն անմահանում են:

Արթուր Խաչատրեան